ցորդ տասն և մին քրօր իննսուն և վեց լաք քսան և ինն հազար ինն հարիւր ութսուն դահեկան երծաթն միալոյ 'ի գանձարանի տանն հայոց վասն որ ոք հարկաւորութեան, ապագայ ժամանակի . . . 119,629,980

## ԳԼՈՒԽ ՇԻԱ.

Բոլոր 'ի վեր շարեցեալ եթէ քարօզ եթէ 520 գլուխ կարգադրութիւնս Օրինաց, է միմիայն նշաւակ ազգ առնելոյ, այլ եթէ 'ի վեր բոլոր գրեցեալքն, և կամ ապա զամենայն զոր ինչ հատորք 'ի ումեքէ շարեցեալ՝ մի ունիցի արժանաւորութիւն բայց 'ի յայնմանէ հատորաց որում հաճեսցի 'ի կամս բոլոր տանուտերաց և հայրապետին և նախարարին և իշխանաց և գաւառապետաց հայոց, և ձեռնադրեսցի 'ի նոցանէ, ապա զտանիցի շնորհս արժանաւորութեան։

## ՎԵՐՋ